

Հարգելի պարոն Միրզոյան.

Ի պատասխան Ձեր **31.08.2021թ.** գրության՝ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված լարված համաճարակային իրավիճակն իր տնտեսական հետևանքներն է թողել ինչպես տնտեսության, այնպես էլ առողջապահական ոլորտի վրա, արդյունքում՝ Երևանի ենթակայության առողջապահական ընկերությունները հայտնվել են ծանր ֆինանսական վիճակում:

Միաժամանակ **2020** թվականին Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ, ինչպես նաև ռազմական դրության արդյունքում էականորեն նվազել են ինչպես արտահիվանդանոցային, այնպես էլ հիվանդանոցային բուժհաստատությունների այցերը, հետևաբար՝ պացիենտների բժշկական օգնության և սպասարկման դիմաց և՛ պետական պատվերից, և՛ վճարովի հիմունքներով մատուցված ծառայություններից ստացված մուտքերը, արդյունքում Երևանի ենթակայության արտահիվանդանոցային բուժհաստատությունների կողմից **2020** թվականին վճարովի հիմունքներով մատուցված ծառայություններից ստացված ընդամենը մուտքերը կազմել են **517.5** մլն դրամ, կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ նվազումը կազմել է **39.7** մլն դրամ, կամ **7.6%**, իսկ հիվանդանոցային բուժհաստատությունների կողմից վճարովի հիմունքներով մատուցված ծառայություններից ստացված մուտքերը կազմել են **3261.7** մլն դրամ, կամ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ նվազումը կազմել է **930.1** մլն դրամ, կամ **28.5%**:

Միաժամանակ՝ Երևանի ենթակայության փոքր, միջին մեծության և միայն մանկական կամ միայն մեծահասակ բնակչություն սպասարկող պոլիկլինիկական բուժհաստատություններում առողջապահության նախարարության և բուժհաստատությունների միջև կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման» պայմանագրերի շրջանակներում ֆինանսավորումը չի բավարարում նույնիսկ բուժաշխատողների աշխատանքի դիմաց ՀՀ առողջապահության նախարարի **04.02.2019թ. հ.259-Ա** հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող աշխատողների աշխատանքի վարձատրման» ուղեցույցի /այսուհետ՝ ուղեցույց/ համաձայն հաշվարկված վարձատրությունը իրականացնելուն, քանի որ արտահիվանդանոցային բուժհաստատությունների ընդամենը ծախսերի մեջ աշխատավարձի գծով ծախսերը կազմում են մեծ տեսակարար կշիռ: Մասնավորապես՝ **2020** թվականին միայն ուղեցույցի համաձայն հաշվարկված վարձատրությունը պետական պատվերից ստացված հաշվարկային եկամտում կազմել է միջինում **76%** (ըստ առանձին բուժհաստատությունների տատանվում է **60-117.8%**), իսկ ընդամենը հաշվարկային աշխատավարձի գծով ծախսերի տեսակար կշիռը ընդհանուր հաշվարկային եկամտում կազմել է միջինում **85%** (ըստ առանձին բուժհաստատությունների տատանվում է **52-98%**):

Բացի աշխատավարձի գծով ծախսերից՝ հիվանդանոցային և արտահիվանդանոցային ընկերությունների կողմից կատարվում են նաև այլ ծախսեր, որոնց մեջ առաջնային են կոմունալ ծախսերը /հոսանք, ջուր, գազ, հեռախոսակապ, ինտերնետ կապ/, բժշկական պարագաների և քիմիական /լաբորատոր/, ախտահանիչ նյութերի, ներպոլիկլինիկական և ներհիվանդանոցային դեղորայքի ձեռքբերման գծով ծախսերը: Սակայն, բնականոն գործունեությունն ապահովելու համար, բուժհաստատությունների կողմից կատարվում են նաև այլ անհրաժեշտ և պարտադիր ծախսեր, ընդ որում՝ **2019** թվականի հետ համեմատ **2020** թվականին տարեկան արդյունքներով տեղի է ունեցել ծախսերի ավելացում՝ պայմանավորված պարտադիր հարկերի /գույքահարկ, հողի հարկ, աղբահանություն/, ինտերնետ կապի ծառայության և սպասարկման, էլեկտրոնային առողջապահական «Արմեդ» համակարգի վճարի գծով ծախսերի, նվազագույն աշխատավարձի

բարձրացմամբ պայմանավորված ծախսերի, ինչպես նաև էլեկտրոնային հերթագրման համակարգի ներդրման արդյունքում գրասենյակային ծախսերի ավելացմամբ: Նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված ծախսերի հաշվարկը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ պայմանավորված նոր կորոնավիրուսային հիվանդությամբ՝ ավելացել է նաև արտահիվանդանոցային բուժհաստատությունների կողմից պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում իրականացվող լաբորատոր-գործիքային հետազոտությունների տեսակարար կշիռը, հետևաբար՝ ավելացել է նաև հետազոտությունների անցկացման համար անհրաժեշտ նյութածախսը, որը նույնպես լրացուցիչ ֆինանսական բեռ է բուժհաստատությունների համար: Սակայն «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում ֆինանսավորումը կատարվում է նույն սկզբունքով /օրական կտրվածքով սպասարկվող մեկ բնակչի հաշվով/, արդյունքում՝ բուժհաստատությունների ֆինանսական միջոցները չեն բավարարում այլ անհրաժեշտ և պարտադիր ծախսեր կատարելու համար:

Տեղեկացվում է նաև, որ **2020** թվականին նույն խնդիրը առկա է եղել նաև Երևանի ենթակայության հիվանդանոցային բուժհաստատությունների մոտ, քանի որ ՀՀ առողջապահության նախարարի **24.03.2020**թ. հ.Լ.Ք/**02.1/5560-20** գրությամբ հանձնարարվել է հետաձգել պլանային կարգով պացիենտների ընդունումը և պլանավորված վիրահատությունների իրականացումը, ապահովել միայն հոսպիտալացման և/կամ վիրահատությունների իրականացումը միայն այն դեպքերում, երբ դրանց հետաձգումը կհանգեցնի առողջական վիճակի կտրուկ վատթարացման: Արդյունքում կտրուկ նվազել է հիվանդանոցային բոլոր ծառայություններ հաճախելիությունը, կրճատվել են պլանային վիրահատությունները և բուժումը, իսկ հիվանդանոցային բուժհաստատությունների բնականոն գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական հոսքերի /ինչպես պետական պատվերից, այնպես էլ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ստացված/ գերիշխող մասն ապահովվում է պացիենտների պլանային բուժման արդյունքում:

Վերոգրյալից արդյունքում՝ **2020** թվականի հաշվետու տարվա ավարտին արտահիվանդանոցային և հիվանդանոցային բուժհաստատությունների մոտ առաջացել է ծանր ֆինանսական վիճակ, հաշվետու տարվա արդյունքներով ստացվել են վնասներ, առաջացել է դրամական միջոցների դեֆիցիտ, կուտակվել են կրեդիտորական պարտավորություններ:

Միաժամանակ Երևանի ենթակայության հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատությունները **2021** թվականի մայիս ամսից սկսած պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մատուցված ծառայությունների դիմաց ստացել են ավելի քիչ ֆինանսավորում, քան ընդունված կատարողականն է, ինչի արդյունքում էլ ավելի է վատթարացել ընկերությունների ֆինանսական վիճակը: **2020** թվականի մայիս-հունիս ամիսների դրությամբ միայն արտահիվանդանոցային բուժհաստատությունների թերֆինանսավորումը կազմել է **150.6** մլն դրամ:

Վերոնշյալ խնդիրները մշտապես գտնվել և գտնվում են աշխատակազմի առողջապահության վարչության ուշադրության ներքո և կարգավորման նպատակով բազմաթիվ անգամ Երևանի քաղաքապետի, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի համապատասխան գրություններ են ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն:

Միաժամանակ՝ ընկերությունները տեխնիկապես հագեցնելու և ֆինանսական մուտքեր ապահովելու նպատակով Երևանի բյուջեի «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում ձեռք են բերվում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ և այլ բժշկական սարքավորումներ և պարագաներ, որի արդյունքում ավելացել են բուժհաստատությունների կողմից մատուցվող վճարովի ծառայություններից ստացված մուտքերը: **2013-2020** թվականներին տրամադրվել է **707** հատ, ընդամենը **580.9** մլն դրամի բժշկական սարքավորում, իսկ **2021** թվականին նախատեսվում է տրամադրել **41** հատ, ընդամենը **203.3** մլն դրամի բժշկական սարքավորում:

2021 թվականի հունվար-հուլիս ամիսներին 2020 թվականի նույն ժամանակահատվածի հետ համեմատ գրանցվել է վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություններից ստացված մուտքերի աճ **652.6** մլն դրամով /այդ թվում՝ հիվանդանոցային բուժհաստատություններին՝ **522.0** մլն դրամ, արտահիվանդանոցայինը՝ **130.5** մլն դրամ/, սակայն միայն դա բավարար չէ կուտակված պարտավորությունները կատարելու և ընթացիկ գործունեությունն ապահովելու նպատակով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ